ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին

Ընթացակարգի ծածկագիրը «ՀՀ ԼՄՎՔ ԷԱՃ ԱՊՁԲ -19/11»

2019թ. Վանաձորի համայնքապետարանը ստորև ներկայացնում է իր կարիքների համար բենզինի/ռեգուլյար/ ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԼՄՎՔ ԷԱՃ ԱՊՁԲ -19/11» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին տեղեկատվությունը՝

Չափաբաժնի համար	Գնման առարկայի համառոտ նկարագրություն	Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում	Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի /ընդգծել համապատասխան տողը/	Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն
1	2019թ. Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար բենզինի /ռեգուլյար/ ձեռքբերում	-//-	1-ին կետի 2-րդ կետի 3-րդ կետի 4-րդ կետի	20.12.2018թ. ֆինանս-ների նախարարությունից ստացված բացասականեզրակացություն: Նշված եզրակացության հիման վրա հրավերում փոփոխություններ (փոփոխությունները սահմանված ժամկետում են) e-Auction էլեկտրոնային համակարգը թույլ չի տալիս իրականացնել:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՀՀ ԼՄՎՔ ԷԱՃ ԱՊՁԲ -19/11» ծածկագրով գնումների համակարգող Լուսինե Բաղրամյան-ին:

Հեռախոս՝ 060650369:

Էլեկոտրանային փոստ՝ gnumnervanadzor@mail.ru:

Պատվիրատու՝ *Վանաձորի համայնքապետարան*:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

0010, Երևան, Մելիք-Ադամյան փող. 1
Էլ. փոստ՝ secretariat@minfin.am

Հեռ.՝ (+374 11) 800 156, ֆաքս՝ (+374 11) 800 132
Վեբ կայք՝ www.minfin.am

Պատվիրատու՝ Վանաձորի քաղաքապետարան

Գնման ձև՝ էլեկտրոնային աճուրդի միջոցով գնում կատարելու ընթացակարգ

Ընթացակարգի ծածկագիր՝ ՀՀ ԼՄՎՔ ԷԱՃ ԱՊՁԲ-19/11

Գնման առարկա՝ բենզինի ձեռքբերում

Ընթացակարգի հրապարակման ամսաթիվ՝ 18.12.2018թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

(բացասական)

ՀՀ կառավարության 16.11.2017թ. թիվ 1454-Ն որոշմամբ հաստատված՝ «Ընտրանքային կարգով պատվիրատուների հաստատած գնման առարկաների բնութագրերի և մասնակիցների ներկայացվող որակավորման պահանջների գնահատման» կարգի 2-րդ կետի համաձայն՝ մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների պահպանման տեսանկյունից, ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Վանաձորի քաղաքապետարանի ՀՀ ԼՄՎՔ ԷԱՃ ԱՊՁԲ-19/11 ընթացակարգի հրավերի գնահատման արդյունքում արձանագրվել է հետևյալը.

1. Ընթացակարգը կազմակերպվել է չպահպանելով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 61-րդ կետի 1-ին և 2-րդ և 63-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված պահանջները:

2. Ընթացակարգի հրավերում ներառված պայմանագրի նախագծին կից տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցում հստակեցված չէ, թե Պատվիրատուի մոտ պահանջ առաջանալու դեպում Կատարողի կողմից ինչ ժամանակահատվածում պետք է մատակարարվեն ապրանքները համապատասխան քանակներով, այսինքն՝ չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:

Կատ.՝ Սամվել Խալաթյան
Հեռ.՝ 011-800-221